

խաչած: Շուրջը՝ 3 տող.

ԼԻԾ ողորմի Համբարձումին  յսէ
տապան եղեսիարնակ
Համբարձում Միրաննանչի:

ԱՄ ՈՂՈՐՄԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻՆ. ԱՅՍ Է/ ՏԱՊԱՆ
ԵԴԵՍԻԱԲՆԱԿ/ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԻՐԱՆԵԱՆՑԻ:
ԾԱՆՈՅ. Այս է կապակցության Ա. տառը
թռչնագիր է:

Լուսաճկ. 180

ԲՈՒԴՅՈՆՈՎԱԿ (ՊՐԻԿՈՒՄԱԿ, ՆԱԽԿԻՆՈՒՄ՝ ՄԱՃԱՌ, ՍՈՒՐԲ ԽԱԶ)

Ստավրոպոլի երկրամասի Բուդյոնովսկ քաղաքը եղել է Հյուսիսային Կովկասի բազմամարդ Հայ ազգաբնակչության մեկը: Հայ ազգաբնակչությունն այստեղ է եկել Դադաստանից (1786 թ.), Պարսկաստանից, ինչպես նաև. Սնդրկովկասից: Ռուսաց Պավել կայսրը այստեղ Հանդրվանած Հայերին առանձին հրովարտակով շնորհել է ընդարձակ հողեր:

Ս. Զալալյանի շրջագայության ժամանակ՝ 1850-ական թվականներին, Բուդյոնովսկում, որ նրա օրոք կոչվում էր Սուրբ Խաչ, ապրել են 600 Հայ ընտանիքներ, որոնք չեն ունեցել ազգային գաղտնիք: Դպրոցը բացվել է Ս. Զալալյանի եռանգալին ջանքերի շնորհիվ: Գիտնական հոգեբորականը ցավով է նշում, որ տեղի Հայերը «չլիտեն խօսիլ Հայերեն»¹: Բուդյոնովսկի մոտ է եղել «Մաճառ» քաղաքը, ուր ընկավ 26 Հայ ընտանիքները ունեցել են անշուք մի եկեղեցի²:

Նշենք, որ այս քաղաքի Հայ ազգաբնակչությունը այլևայլ ժամանակներում կառուցել է երեք եկեղեցի³:

1. Ս. Փրկիչ, փայտաշեն, այժմ դոյուլությունն չունի:

2. Ս. Աստվածածին. կառուցված է եղել թրծած աղյուսով, այժմյան քաղաքային պարտեզի ճաշարանի տեղում: Բացի վեղարից, մնացածը կա:

3. Ս. Գեորգ. աղյուսաշեն փոքրածավալ եկեղեցի է: Գտնվում է այժմյան Անգլիականայտ փողոցի վրա: Ներքուստ ուղղանկյունաձև կառույց է՝ փայտաշեն տափակ տանիքով, որը նստած է փայտե կլոր սյուների վրա: Եկեղեցու պատերին ամրացված են բազմաթիվ սրբապատկերներ: Մեր շրջագայության ժամանակ (1968 թ.) եկեղեցին քահանա չունեի. այն պահպանում էր Սառա անունով բարեպաշտ մի Հայուհի:

637 Ս. Գևորգ եկեղեցու ներսում դրած փայտե գագազի վրա՝ շրջանաձև փորագրված է 4 տող.

ԻՅԻՀԱՏԱԿ ՀՈԳԻՈՅԻՏԵՐ ՀԱՌՈՒՅԵԱԼ ՈՐԴԻՈՅԻՐՈՅ ԳՐԻԳՐԻ ԵՏ ԹԱՂԱԶԱՆ

ՊԱՏԿԵՐ ՏՆ ՍԵՐՈՅ ՅՄԻ ՔՄԻ ԱՅՍՈՒ

ՋԱԴԱՐԵԱԼ ՏԱԳԱՂԱԽ ԵԿԵԼԵՑԻՈՅՆ ՄԻ, ԱԵՆԱՓՈԿՅԻՆ ԼՇՈՐՈՒ

ՂԶԱՐԵՑԻ ԱԹԷՈՍ ԷԼԻԶԱՐԵԱՆՑԻ 1868 ԱՅ Ի 10 ապր

1 Ս. Զալալյան, Բ, էջ 450, 452:

2 Նույն տեղում:

3 Տե՛ս Ставропольская губерния, сост. Твалчредидзе, Ставрополь, 1897.

Ի ԹԻՇԱՏՈՒՆ ՀՈԳԻՈՅ Ի ՏԷՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ԻԻՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԵՏ ԹԱՂԱՄԱՆՆ / ՊԱՏԿԵՐ
ՏՆ. ՄԵՐՈՅ ՅՍԻ ՔՍԻ ԱՅՍՈՒ / ԶԱՐԴԱՐԵԱԼ ՏԱԳԱՂԱԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ Ս [Ր]Բ[Ո]Յ
ԱՄԵՆԱՓՐԿԶԻՆ ՄԱՋՈՒԻ / ՂԱԼԱՐԵՑԻ ՄԱՏԹԵՆՈՍ ԷԼԻԶԱՐԵԱՆՑԻ. 1868 ԱՄԻ Ի 10 ԱՊՐԻԼԻ:

ԲՈՒԴՅՈՆՈՎՍԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՅ

Բուգյոնովսկի հայկական հին գերեզմանոցը ոչնչացված է: Նորը 19-րդ դարից է, սակայն
գտնվում է անմխիթար վիճակում: Նկատի ունենալով այն պարագան, որ շուտով այս
գերեզմանոցն էլ է կործանվելու, նպատակահարմար գտանք ընդօրինակելու մի շարք
տապանադրերի նմուշներ՝ հատկապես աղագորական-րանասիրական նկատառումներով: Ահա
գրանք.

638. Տապանաքար. վերին մասում՝ 1899, սառը՝ 5 տող.

ԱՍՏ ՀԱՆԳԶԻՆ / ՈՍԿԵՐՔ ԿՆՈՋՆ ԱԿՈՐ ՅՈՎՆԱՆԵՆՑԻ / ԿԱՏԱՐԻ / ՆԷ ԴԱ / ՎԻԴԵԼԱՅՆ:

639. Տապանաքար, վրան ուսական խաչ և 4 տող.

ԱՍՏ ՀԱՆԳԶԻՆ ՈՍԿԵՐՔԻ ԿՆՈՋԸ / ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԱՆԵԱՆՑԻ ԱՆՆԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆ / 1894
ԱՄԻ / ՅՈՒՆ. 10:

Ծանոթ. Արձանագրության վերջին յուև-ը պեք է կարգալ Յուևվարի կամ Յուևիսի:

640. Տապանաքար, նույնատիպ, կրաքարից: Վրան՝ 3 տող.

ԱՍՏ ՀԱՆԳԶԻՆ ՈՍԿԵՐՔ / ՍԱՆԴՈՒԽՏԱ՝ ԳԻՆՆ ԽԱԶԱՀՈՐ / ՄԱՐՔԱՐԵԱՆՑ / 1897 ԱՄԻ 20
ՅՈՒԼԻՍԻ:

641. Տապանաքար, վրան՝ 2 տող.

ԱՍՏ ՀԱՆԿԶԻՆ ՈՍԿԵՐՔ ԶԱՔԱՐԱՅ Վ. ԱԼԱՆԵՔԵԱՆՑ / 1894 ԱՄԻ. 15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ:

642. Տապանաքար, վրան՝ 2 տող.

ԱՍՏ ՀԱՆԿԶԻՆ ՈՍԿԵՐՔ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ / ԲԱՂԴԱՆԵԱՆՑ. ՎԱԽՃ. 1896 Թ.:

643. Տապանաքար, ունի 6 տող.

ԱՍՏ ՀԱՆԿԶԻՆ ՈՍԿԵՐՔ ԿԻՆՆ / ՄԱՆՈՒԿԻ / ԵՂԻՍԱԲԷՏ / ՂԱԼԱԲԵԳԵԱՆՑ. / ՎԱԽ. 1897 ԱՄԻ /
ՅՈԿՏ. 15:

644. Տապանաքար, ունի 8 տող.

ԱՍՏ ՀԱՆԿԶԻՆ ՈՍԿԵՐՔ / ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎ / ՅԱՆԵՍԵԱՆ / ԲՈԶԿԱԶԻԱՆՑ. /

ԴԵՌ ԶԻ ԲԱՑՈՒԱԾ ԿՈԿՈՆ ԷՐ, / ԹԱՌԱՄԵՑԱՐ ՎԱՂԱԺԱՄ

ԵՒ ԹՈՂԵՑԻՐ ԽԱՂՋ ՄՈՐԴ ՍԵՒ ՍԳԻ ՄԵՋ ՅԱՐԱԺԱՄ.

ԾՆ. 1891 ԹԻՒ 8 ՈՒՆ. 25-Ն. / ՈՂ. 1906 Թ. ՅՈՒՆԻՍԻ 7-Ն:

645. Տապանաքար, ունի 4 տող.

ԱՍՏ ՀԱՆԳԶԻՆ / ՈՍԿԵՐՔ ԿԱՐԱՊԵՏ ՅԱՐՈՒԹԻՒՆ / ԵԱՆ ՂԱՐԻԱՆՑ. / ՈՒ. 1910 ԱՄԻ, ՅՈՒՆ. 5-Ն:

Ծանոթ. Երկրորդ տողի առաջին ՈՒ-ն թերևս ուսերեն ԿՄԵՐ րառի սկզբնառան է,
գրված հայերեն:

646. Տապանաքար, վրան 8 տող.

1911 ԹՎԻՆ / ԱՊՐԻԼԻ 1-Ն / ԱՍՏ ՀԱՆԳԶԻՆ / ՈՍԿԵՐՔ / ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎԱՆԵՍԵԱՆ
ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆՑ /:

ԴԵՌ ԶԲԱՑՈՒԱԾ ԿՈԿՈՆ / ԹԱՌԱՄԵՑԱՐ ՎԱՂԱԺԱՄ

ԵՒ ԹՈՂԵՑԻՐ ԽԵՂՋ ՄՕՐԴ ՍԵՒ ՍԳԻ ՄԵՋ ՅԱՐԱԺԱՄ: